ԷԴԻԹ ՊՐԻՆՏ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդմիավորումների աշխատանքներին

Առարկա՝ Տարրական դասարաններ (դասվարներ)

Ուսուցիչ՝ **Անահիտ Ղավալյան**

Դպրոց՝ Մարտունի գյուղի միջնակարգ

Ղեկավար՝ Ավիդա Խալաթյան

2023թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
1.ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 6
Մեթոդական միավորումների դերն ու գործառույթները: Տեսամեթոդական 6
վերլուծություն 6
2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ: ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ 14
2.1 Ուսուցչի մասնակցությունը մեթոդական միավորման աշխատանքներին 14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19
ՀԱՎԵԼՎԱԾ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող, համակարգող հիմնական օղակ են հանդիսանում առարկայական մասնախմբերը, որոնք ունեն իրենց կոնկրետ գործառույթները՝ որպես ուսումնական հաստատությունում մանկավարժական աշխատողների մասնագիտական աշխատանքը պլանավորող, բարելավող, վերահսկող մարմին: Եթե փորձենք ընդհանրացնել, ապա կստացվի, որ մեթոդմիավորման շրջանակներում իրականացվող մեթոդական աշխատանքի հիմքում ներքոբերյալ սկզբունքներն են.

- ***լավագույն փորձի փոխանակում,***
- ***մեթոդամանկավարժական և ուսումնադաստիարակչական հարցերի քննարկում,***
- ***արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպում,***
- ***ուսումնական հարցերի քննարկում, փորձարկում, տեղայնացում,***
- ***հնարավոր խնդիրների միասնական հաղթահարում:***

Այստեղից կարելի է եզրահանգել, որ մեթոդական միավորումների գործունեությունը միտված է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը՝ հիմք ընդունելով կրթության որակի բարելավման, կրթական նորարարությունների անցնցում տեղայնացման անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ՝ մեթոդական միավորումների շրջանակներում ուսուցիչների փոխգործակցությունը նպատակ ունի համատեղ ջանքերով խթանել ուսուցիչների ստեղծարարության, նորարարության, նախաձեռնության զարգացումը, հնարավորություն ստեղծել միասնական աշխատելու, ինտեգրված դասեր, արտադպրոցական և արտադասարանային գործունեություն պլանավորել, խնդրահարույց իրավիճակների հաղթահարման ելքեր որոնել:

Միավորման անդամ ուսուցիչները հնարավորություն ունեն բարձրաձայնել իրենց հուզող ուսումնական հարցերը, քննարկել դրանք, հանդես գալ նպատակային առաջարկություններով, նախագծել աշխատանքի իրականացման ճանապարհային

քարտեզներ, քննարկել իրականացված փոխադարձ դասալսումներն ու կիսվել մանկավարժական օրինակելի փորձով: Սա հրամայական է՝ պայմանավորված կրթական ոլորտի բարեփոխումներով, տեխնոլոգիական առաջընթացով, ինչը ենթադրում է, որ ուսուցիչներն անպայման պետք է զինվեն համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով, արդյունավետ դաս պլանավորելու հմտություններով: Հենց այս համատեքստում են հնարավոր որոշակի դժվարություններ, անսպասելի խնդիրներ, որոնց լուծումը միասնաբար կարելի է գտնել առարկայական մասնախմբերի շրջանակներում իրականացվող աշխատանքի ընթացքում: Ստացվում է, որ մեթոդական միավորումներում կոլեկտիվ աշխատանքը ուսուցչի համար ստեղծում է լայն հնարավորություններ՝ սովորելու, սովորեցնելու, ուսումնասիրելու, հետազոտելու:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ուսուցչի մանկավարժական որակների բարելավումն օրախնդիր է և ենթադրում է համագործակցային արդյունավետ հարաբերությունների հաստատում գործընկերների հետ: Այս համատեքստում ավելի է ընդգծվում մեթոդական միավորումների շրջանակներում ուսուցիչների նպատակային փոխգործակցության դերը՝ ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացման, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման և իրականացման վրա: Վերը նշված հանգամանքների անհրաժեշտության կարևորությունից էլ բխում է սույն հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել մեթոդական միավորումների՝ որպես ուսուցիչների փոխգործակցության առաջնային օղակի հիմնական դերը, գործառույթները, մեթոդական միավորումների նախագահների և անդամների գործառույթները, ինչպես նաև այս օղակի ազդեցությունը կրթության որակի բարելավման վրա:

Հետազոտության խնդիրը:

- Ուսումնասիրել մասնագիտական գրականություն, կրթական օրենսդրություն:

- Հիմնավորել մեթոդական միավորումներ կազմելու անհրաժեշտությունը և դրանցում ներգրավված ուսուցիչների հնարավոր ձեռքբերումները:
- Հիմնվելով սեփական փորձի վրա՝ կատարել դիտարկումներ:

1.ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Մեթոդական միավորումների դերն ու գործառույթները: Տեսամեթոդական

վերլուծություն

Հանրակրթական ուսումնական հաստատությունում մեթոդական աշխատանքի իրականացման ձևերից է մանկավարժական աշխատողների համատեղ աշխատանքը մեթոդական միավորումների կազմում: Դրանք մոտ կամ հարակից առարկաներից կազմված առարկայական մասնախմբեր են, որոնք, համաձայն սահմանված կարգի, իրականացնում են կանոնակարգված գործունեություն: Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ[1]: Մեթոդմիավորումների կազմման հարցում որոշում կայացնողը դպրոցի մանկավարժական խորհուրդն է: Մանկավարժական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում[2]:

Մանկավարժական խորհրդի նիստում անդամները քննարկում են մեթոդական միավորումների կազմման հարցն ու անհրաժեշտության դեպքում ընդունում այն՝ կայացնելով համապատասխան որոշումներ: Աշակերտների թվով պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում հաջորդիվ մոտ կամ հարակից առարկաներից ձևավորվում են առարկայական մեթոդական միավորումներ: Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ Կառավարության որոշում:
[2] Նույն տեղում

ուսուցիչներից: Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում[3]: Մեթոդական միավորումների թիվը որոշվում է՝ ելնելով ուսումնական հաստատության կողմից հանձնարարված խնդիրների համալիր լուծման անհրաժեշտությունից և հաստատվում դպրոցի տնօրենի հրամանով: Մեթոդական միավորումները ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են դպրոցի տնօրենի կողմից՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի առաջարկությամբ: Մեթոդական միավորումները անմիջականորեն ենթակա են ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենին:

Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնական գծով տնօրենի տեղակալի պաշտոնային պարտականություններից է՝ ղեկավարել առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները, ընդհանրացնել և տարածել մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը, աջակցել ուսուցման նոր մեթոդների ներդրմանը, ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին[4]: Մեթոդական միավորումների կազմում ուսուցիչներն իրենց աշխատանքը պլանավորում են՝ հիմք ընդունելով սովորողի իրավունքներն ու շահերը, առաջնորդվում են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով, կառավարության որոշումներով՝ հաշվի առնելով կրթական մարմինների բոլոր մակարդակների սովորողների շահերն ու իրավունքները:

Մեթոդական միավորումը, որպես դպրոցի կառուցվածքային միավոր, ստեղծվում է ուսումնական հաստատության հետևյալ խնդիրները լուծելու համար.

[3] Նույն տեղում
[4] Նույն տեղում

■ուսուցիչների մասնագիտական որակների զարգացում

■ կրթության վերաբերյալ նորմատիվային և մեթոդական փաստաթղթերի ուսումնասիրություն, ուսումնական պլանների, թեմատիկ պլանների պատրաստում

■տարբեր տեսակի դասերի անցկացման մեթոդաբանության կատարելագործում և դրանց կրթական, մեթոդական և նյութատեխնիկական աջակցություն

■մանկավարժական փորձերի, փոխադարձ դասալսումների անցկացում, արդյունքների քննարկում, վերջնարդյունքների ամփոփում հաշվետվությունների տեսքով

■հեղինակային ծրագրերի, մեթոդների վերլուծություն

■ավարտական դասարանների բանավոր քննությունների համար նախատեսված հարցաշարերի, թեստային աշխատանքների համալիր քննարկում, պատրաստում

■ուսուցիչների մասնագիտական որակների զարգացում

■ծանոթացում ներդպրոցական ուսումնական գործընթացին, առարկայի դասավանդման վիճակի մշտադիտարկում, վերլուծություն

■ինտեգրված դասերի պլանավորում, իրականացում, արդյունքների վերլուծություն, կոնկրետ թեմայով բաց դասերի կազմակերպում՝ առարկայի բարդ թեմաների մեթոդաբանական զարգացումներին ծանոթանալու նպատակով

■առաջադեմ մանկավարժական փորձի ուսումնասիրություն և ընդհանրացում

■բարձր մասնագիտական մակարդակով ուսումնական, մեթոդական և փորձարարական աշխատանքի կազմակերպում և անցկացում մեկ կամ մի քանի հարակից առարկաներից, թեմայի վերաբերյալ մեթոդական զարգացումներին ծանոթացում, առարկայի դասավանդման մեթոդների վերլուծություն

■հաշվետվությունների պատրաստում ուսուցիչների մասնագիտական ինքնակրթության, խորացված վերապատրաստման դասընթացների մասին, ուսուցման մեթոդների քննարկում, փորձնական կիրառում

■նորարարական տեխնոլոգիաների ուսումնասիրություն և ներդնում

■առարկայական օլիմպիադաների ներդպրոցական փուլի կազմակերպում և անցկացում:

- գիտաժողովների, մրցույթների կազմակերպում և անցկացում
- մատենավարական աշխատանքների իրականացում, վերահսկում
- ուսումնական գրավոր աշխատանքների պլանավորում, հարցաշարերի կազմում և իրականացում
- սահմանված կարգով փորձարկվող դասագրքերի փորձաքննության կազմակերպում
- ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկի ներկայացում դպրոցի տնօրենին
- սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում:

Ստացվում է, որ մեթոդական միավորումների աշխատանքը ուղղված է ուսուցչի մասնագիտական որակների բարձրացմանը՝ խրախուսելով կոլեկտիվում աշխատելու և համագործակցելու վերջինիս ցանկությունը: Նկատենք, որ առարկայական մասնախմբերի բոլոր անդամներն ունեն հավասարազոր իրավունքներ ու պարտականություններ: Իրենց կատարած աշխատանքով վերջիններս հաշվետու են մեթոդական միավորման նախագահին, ով ի պաշտոնե, համակարգում է միավորման աշխատանքները՝ դրանք ամփոփելով միավորման նիստերի ժամանակ: Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են[5]:

Մեթոդական միավորում է կազմում նաև կրթության առաջին՝ տարրական օղակը, որտեղ դասվարների համար ստեղծվում է համագործակցային միջավայր: Միջին և ավագ դպրոցների մանկավարժական համակազմն ընդգրկվում է այլ առարկայական մասնախմբերում.

- **Հումանիտար**

[5] Նույն տեղում

- **Բնագիտական**
- **Ռազմահայրենասիրական**
- **Ընդհանրական**

Առարկայական մեթոդական միավորման նիստերի ընթացքում նախագահը, ով վարում է նիստը, պարտավոր է անդամներին ծանոթացնել նախօրոք կազմված օրակարգին, որի հաստատման դեպքում, նիստի ընթացքն արձանագրվում է: Նիստում քննարկված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ընդունվում են որոշումներ: Միավորման աշխատանքները ղեկավարում է դպրոցի տնօրենի կողմից առաջարկված և մանկավարժական խորհրդի հավանությանն արժանացած ամենափորձառու մանկավարժական աշխատող, ով աչքի է ընկնում նաև իր մարդկային որակներով, կառավարման փորձով: Նկատենք, որ մեթոդական միավորումների արդյունավետ և անխափան աշխատանքն ուղղված է նաև կրթության որակի բարելավմանը: Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում անհատապես կամ կոլեկտիվ եղանակով: Գիտելիքաստեղծ գործունեությունը որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության, ժողովրդավարական հասարակարգի զարգացման, կյանքի զարգացման նոր ուղիների ու մոդելների ստեղծման ու զարգացման[6]: Մեթոդական միավորման ներսում ուսուցիչները նախապատրաստվում են ինտեգրված դասերին, հստակեցնում միջառարկայական կապերի ստեղծման հնարավորությունները, ինչը նույնպես շատ կարևոր բաղադրիչ է որակյալ կրթական միջավայր ունենալու ճանապարհին: Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում[7]:

---

[6] http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում, էջ4:

[7] Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов, Москва. 2008, стр.52.

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականություն միջառարկայական կապերով: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կոորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը[8]:

Մեթոդական միավորման աշխատանքներն իրականացվում են ընթացիկ ուսումնական տարվա աշխատանքային պլանին համապատասխան, պլանը կազմում է մեթոդմիավորման ղեկավարը, քննարկվում մեթոդմիավորման նիստում՝ նախօրոք համաձայնեցնելով մեթոդական գծով փոխտնօրենի հետ: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ մեթոդական միավորումների աշխատանքը դպրոցում կարող է իր նպաստը բերել կրթության որակի բարձրացմանը, ավելին՝ հակված ենք մտածել, որ կազմակերպչական, վերահսկման առողջ մթնոլորտը թույլ կտա , որ դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացն իրականացվի անցնցում, բարձր մակարդակով, բարոյահոգեբանական առողջ պայմանների առկայությամբ: Մեթոդական միավորումների գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում են դպրոցի տնօրենը և ուսումնական գծով տնօրենի տեղակալը:

Դպրոցի առարկայական մեթոդական միավորումները կարող են անցկացնել նաև ինտեգրված քննարկումներ մի քանի օղակներով:

Նիստի ընթացքում կարող են քննարկվել հետևյալ հարցերը.

[8] И. П. Подласый. Педагогика начальной школы, М. 2000, с. 233.

■ Քննարկվում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ:

■Քննարկվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը:

■Քննարկվում է դպրոցում նախատեսվող ուսումնադաստիարակչական միջոցառումների, պետական և այլ նշանակության տոների կազմակերպման ու անցկացման, հիշատակի օրերի, ոգեկոչման արարողությունների կազմակերպան ու անցկացման հարցը:

■Քննարկվում է դպրոցում նախատեսվող մրցույթների, վիկտորինաների, ընթերցումների կազմակերպման ու իրականացման հարցը:

■Դպրոցում այս կամ այն առարկայի միամսյակ հայտարարելու, աշխատանքն արդյունավետ բաժանելու հարցը, այլ հարցեր:

Նկատենք, որ բոլոր մեթոդական միավորումներն իրականացնում են ուսումնական առարկաների վերաբերյալ ժամանակակից ուսուցման հայեցակարգերի ուսումնասիրություններ, վերահսկում դասավանդման արդյունավետությունը, կազմակերպում ներդպրոցական վերահսկողություն: Եթե մեթոդական աշխատանքը դպրոցում լավ է կազմակերպված, ապա հնարավոր է դառնում ընդգծված կերպով բարձրացնել ուսումնադաստիարակչական գործընթացի որակը: Այս պարագայում ստացվում է, որ ուսուցիչների համագործակցությունը կարելի է համարել գերազանց: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով»[9]: Առարկայական մեթոդական միավորումներն իրենց կատարած մատենավարական աշխատանքներով հաշվետու են ուսումնական գծով փոխտնօրենին: Այդպիսի փաստաթղթերից են.

[9] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:

- մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլան
- մեթոդական միավորման նիստերի արձանագրություններ
- անցած ուսումնական տարվա աշխատանքի վերլուծություն
- առարկայական մեթոդական միավորման անդամների կատարած մեթոդական, ուսումնադաստիարակչական հետազոտություններ
- տեղեկատվություն ուսուցիչների ինքնակրթության մասին
- փոխադարձ դասալսումների արձանագրություններ
- իրականացված հանդիպումների, կոնֆերանսների, սեմինարների, կլոր սեղանների, հաշվետվություններ
- ատեստավորում անցած ուսուցիչների հավաստագրեր
- իրականացրած արտադպրոցական միջոցառումների հաշվետվություններ ու պլաններ
- հաշվետվություն անհրաժեշտ մեթոդական ու դիդակտիկ աջակցության մասին:

Այսպիսով, սույն վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ մանկավարժական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական որակների բարձրացումն է, որն ուղղակի կերպով պայմանավորում է ուսումնական գործընթացում կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ի կատար ածումը, ուստի կարելի է ասել, որ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է իր օրինակով խրախուսել մյուսին՝ ի նպաստ կրթական համակարգի բարելավման և ուսումնական գործընթացի անցնցում իրականացման:

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ: ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

2.1 Ուսուցչի մասնակցությունը մեթոդական միավորման աշխատանքներին

Սույն հետազոտական աշխատանքի շրջանակներում իմ կողմից իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն: Տվյալների հավաքագրման համար անց է կացվել սոց. հարցում կրտսեր դպրոցի ուսուցիչների շրջանում՝ ուսումնական առարկայի, որի նպատակն էր.

- Ուսումնասիրել, հավաքագրել և վերլուծել ուսուցիչների կարծիքները առարկայական մասնախմբերի աշխատանքի արդյունավետության վերաբերյալ:
- Դիտարկել հարցված ուսուցիչների փորձը:
- Համաձայն հարցված ուսուցիչների դիտարկումների՝ քննության առնել առարկայական մասնախմբերի աշխատանքը բարելավելու հնարավոր գործիքակազմերը:

Հարցման արդյունքների վերլուծություն եվ ամփոփում

Հարցաթերթիկ ուսուցիչների համար

N	*Հարցադրում*	*Պատասխաններ*
1	**Արդյունավե՞տ է արդյոք գործում այն առարկայական մասնախումբը, որի անդամ եք հանդիսանում:** ❖ **Այո** ❖ **Ոչ**	
2	**Առկա՞ է արդյոք թիմային աշխատանք, առողջ փոխգործակցություն ուսուցիչների միջև:** ❖ **Այո**	

	❖ Կան դժվարություններ	
3	**Արդյոք պատրաստակամորեն եք մասնակցում աշխատանքներին:** ❖ Այո ❖ Երբեմն	
4	**Աշակերտների սովորելու մոտիվացիան կարևոր համարու՞մ եք ուսումնական գործընթացում:** ❖ Այո ❖ Ոչ ❖ Երբեմն	
5	**Առարկայական մասնախմբում Ձեր մասնագիտական գործունեությունը նպաստու՞մ է արդյոք Ձեր մասնագիտական որակների բարելավմանը:** ❖ Այո ❖ Ինչ-որ չափով	

Սոցիոլոգիական հետազոտության շրջանակներում իրականացված սոց. հարցման արդյունքում պարզ դարձավ.

- Ուսուցիչների շատ փոքր մասը դժվարություններ ունի մեթոդմիավորումների շրջանակներում իր աշխատանքը կազմակերպելու ընթացքում: Ընդ որում՝ պարզ դարձավ, որ դժվարություն ունեցող ուսուցիչները հիմնականում սկսնակ էին, ինչը թույլ է տալիս մտածել, որ ժամանակի ընթացքում բոլոր դժվարությունները կհաղթահարվեն համագործակցության շնորհիվ:

- Հարցման մասնակից ուսուցիչների գերակշիռ մասը դիտարկում է առարկայական մասնախմբերի շրջանակներում գործընկերների հետ համագործակցությունը կարևոր՝ պայմանավորված կրթական մի շարք մարտահրավերներով, որոնք միասնական առավել հեշտ է հաղթահարել:
- Ուսուցիչների գերակշիռ մասն այն կարծիքին է, որ մեթոդական միավորումների անդամ ուսուցիչների շրջանում առկա է առողջ համագործակցությունը, գործընկերային բարեվարք ու աջակցող մթնոլորտ, և հիմնականում բոլորը պատրաստ են ընդառաջ գնալ միասնական աշխատանքին:
- Հարցված ուսուցիչների միայն փոքր մասն է հակված մտածելու, որ առարկայական մասնախմբում իր գործունեությունն այդքան էլ արդյունավետ չէ՝ մասնագիտական որակները բարելավելու հարցում, գերակշիռ մասը նշել է, որ աշխատանքի, համագործակցության շնորհիվ սովորում են, սովորեցնում, փոխանակվում օրինակելի փորձով:

Այսպիսով, կարելի է պնդել, որ իմ կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումն արդյունավետ էր, քանի որ կարողացա վերահաստատել ու հիմնավորել աշխատանքի տեսական մասում իմ կատարած պնդումներն առ այն, որ առարկայական մասնախմբերն անկյունաքարային նշանակություն ունեն դպրոցում մեթոդական աշխատանքն արդյունավետ կազմակերպելու, իրականացնելու և վերահսկելու տեսանկյունից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմ հետազոտական աշխատանքի տեսական և գործնական հատվածներին հղում անելով՝ հանդես գամ մի քանի արձանագրումներով:

Պայմանավորված կրթական բարեփոխումներով՝ շատ կարևոր է ուսուցչի մասնագիտական և մեթոդական գիտելիքների բարելավումը, ինչը կարող է ապահովել կրթության բարձր որակ, սովորողների առաջադիմություն և կրթական բարենպաստ ու աջակցող միջավայր: Այս համատեքստում կարևոր եմ համարում մանկավարժական աշխատողների փոխգործակցությունը, փորձի փոխանակումը ուսումնական հաստատության առարկայական մասնախմբերի շրջանակներում: Այս կերպ դպրոցում ստեղծվում է կանոնակարգված աշխատանքային միջավայր, ինչն իր ուղղակի ազդեցությունն է թողնում ուսումնադաստիարակչական գործընթացների արդյունավետ կազմակերպման և իրականացման վրա: Ուսուցչի համար միավորման շրջանակներում առկա են բազմաթիվ հնարավորություններ՝ զարգանալու, ինքնակրթվելու, նոր ու հետաքրքիր գաղափարներ ու ծրագրեր նախաձեռնելու համատեքստում: Սա նաև վերահսկողական արդյունավետ գործիք է՝ վերահսկելու ուսուցչի փաստաթղթային շարժը, որը նույնպես շատ կարևոր է:

Այսպիսով, ուսումնասիրելով սոցիոլոգիական հարցման արդյունքները՝ վստահաբար կարելի է պնդել, որ ուսուցիչներն իրենք են շահագրգռված նոր ու ժամանակակից տեխնոլոգիաներ ուսումնասիրելու, գործընկերների հետ համատեղ աշխատանքներ իրականացնելու համատեքստում: Կարծում եմ, որ այս հարթակն իրապես ունակ է համախմբել ուսուցիչների ներուժը, ստեղծագործական միջավայր ապահովել նոր ու հետաքրքիր գաղափարներ իրականացնելու համար: Կոլեկտիվ մոտեցումը հնարավոր հիմնախնդիրներին հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի ոգևորվել, առկա խնդիրներն ու նորությունները միասնաբար քննարկել, առաջադրել լուծումներ ու բարելավման նախագծեր:

Աներկբա է, որ այս պարագայում ամեն բան հենց ուսուցչից է կախված: Վերջինս պետք է բաց լինի գործընկերների հետ համագործակցելու, սովորելու և սովորեցնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876
   ՀՀ Կառավարության որոշում:
3. http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf
   Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում:
4. Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов, Москва. 2008.
5. И. П. Подласый. Педагогика начальной школы, М. 2000.

ՀԱՎԵԼՎԱԾ

Սոցիոլոգիական հարցման հարցաթերթ՝ նախատեսված ուսուցիչների համար

1. Արդյունավե՞տ է արդյոք գործում այն առարկայական մասնախումբը, որի անդամ եք հանդիսանում:

❖ Այո
❖ Ոչ

---

2. Առկա՞ է արդյոք թիմային աշխատանք, առողջ փոխգործակցություն ուսուցիչների միջև:

❖ Այո
❖ Կան դժվարություններ

---

3. Արդյոք պատրաստակամորեն եք մասնակցում աշխատանքներին:

❖ Այո
❖ Ոչ
❖ Երբեմն

---

4. Աշակերտների սովորելու մոտիվացիան կարևոր համարու՞մ եք ուսումնական գործընթացում:

❖ Այո
❖ Ոչ
❖ Երբեմն

---

5. Առարկայական մասնախմբում Ձեր մասնագիտական գործունեությունը նպաստու՞մ է արդյոք Ձեր մասնագիտական որակների բարելավմանը:

❖ Այո

❖ **Ինչ-որ չափով**